

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ
ԹԱՄԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ
«ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ»

Թեմայով ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
 բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
 աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Թամարա Արթուրի Անտոնյանի ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարակեսի ամերիկյան դրամատուրգ, սցենարիստ ու գրականության տեսաբան, «աբսուրդի դրամայի» սկանավոր ներկայացուցիչ Էդվարդ Օլբիի ստեղծագործության քննությանը: Էդվարդ Օլբիի ստեղծագործության բնագիրը, որ կառուցված է կերպարների անտրամաբանական բախումների ու իրականության համընդհանուր աբսուրդի, կոմֆորմիզմի ու անհատի օտարման ողբերգական հետևանքների գեղարվեստական արտացոլման վրա, ուղիղ իմաստով շարունակում է Մեյուել Բեքթի, Էժեն Իոնեսկոյի, Թենեսի Ուիլյամսի «աբսուրդի դրամայի» գրական ավանդույթը՝ բոլորովին նոր հարցադրումներով և ստեղծագործական մոտեցումներով: Սկսած առաջին դրամատիկական գործերից՝ ամերիկյան և համաշխարհային գրական հասարակության ուշադրության կենտրոնում է այս մեծ մտածողի ու գեղագետի ստեղծագործությունը, որ խորքային հարցադրումներով անդրադառնում է ամերիկյան հասարակությանը, սոցիալական ու բարոյական խնդիրներով բևեռված այդ հասարակության մեջ անհատի ողբերգական կացությանը, նրա ներքին, «անտեսանելի» կյանքին ու հոգեբանական կացությանը:

Օլբիի դրամատուրգիան անցած մեկուկես հարյուրամյակի ընթացքում ենթարկվել է գրականագիտական քննության ամենատարբեր տեսանկյուններից ու գիտական ամենատարբեր խնդրադրությամբ: Թվում է, թե այլևս ամբողջական պիտի լիներ արծարծած հարցադրումների այն շրջանակը, որով ամերիկյան և առհասարակ արտասահմանյան գրականագիտությունը քննել և վերլուծել է մեծ դրամատուրգի և սցենարիստի գրական-ստեղծարանական ժառանգությունը:

Բայց գիտական խնդիրը, որ դրված է Թամարա Անտոնյանի ատենախոսության հիմքում՝ ստեղծագործական մեթոդների տրանսֆորմացիաները, ժամանակակից քննադատության և գրականության տեսության խնդրադրության իմաստով խիստ հետաքրքիր է և արդիական:

20-րդ դարի երկրորդ կեսը և 21-րդ դարի երկու տասնամյակները ապացուցեցին, որ մարդկությունը շարունակում է ապրել համատարած արսուրդի, սարսափազդու, ամենակործան պատերազմների ու անտրամաբանական հարաբերությունների մեջ, և 21-րդ դարի զարգացած, կանոնակարգված քաղաքակրթությունն անգամ ի վիճակի չէ նրան փրկելու քաղաքական, պետական և ռազմական ամենօրյա ու չդադարող բռնություններից: Մարդկային անտարբերությունն ու եսասիրությունը պատճառ են դառնում քաղաքական, մշակութային ու քաղաքակրթական այնպիսի աղետների ու արհավիրքների, որոնք հնարավոր չէր պատկերացնել անգամ ամենասարսափելի բանդագուշանքներում և մարդկության ապագայի մասին ամենամոայլ պատկերացումներում: Մարդիկ աստոմացվում են, փակվում սեփական ներաշխարհում և միջմարդկային շփումը վերածվում է արսուրդի: Անդրադառնալով Օլբիի ստեղծագործությանը՝ ատենախոսը ընդգծում է և՛ նշված խնդիրների կարևորությունը, և՛ հայ գրականագիտության մեջ դեռ չուսումնասիրված հեղինակի ստեղծագործական ուղու քննության նոր ելակետ է առաջարկում:

Ատենախոսը նշում է, որ իր աշխատանքի նպատակն է՝ «հետևելով Է. Օլբիի տարբեր պիեսների առանձնահատկություններին, ներկայացնել հեղինակի ստեղծագործական մեթոդի տրանսֆորմացիաները» /Ատ. էջ 15/: Այդ խնդիրը չէր կարող չարտացոլվել Օլբիի գրական ստեղծագործություններում: Մյուս կողմից փոփոխվում են նաև գրականագիտական մոտեցումները նշված խնդիրների վերաբերյալ, վերաիմաստավորվում են նախկինում գրված երկերը: Ժամանակակից գրականագիտության մեջ բավականին սուր է դրված գրական ստեղծագործության՝ ըստ գիտական որևէ խնդրի, պրոբլեմի, ապա՝ միջգիտակարգային տարածության մեջ քննելու անհրաժեշտությունը: Հետկոլոնիալ, ֆեմինիստական, հետհումանիստական ուղղությունները կարող են բացարձակ տարբեր տեսանկյուններից վերլուծել նույն ստեղծագործությունները: Թամարա Անտոնյանի ատենախոսությունը նշանակալի է

նրանով, որ հեղինակը աշխատում է գերծ մնալ քաղաքական գաղափարախոսություններից և կենտրանանում է զուտ գրական վերլուծության վրա: Ատենախոսն ընդգծում է, որ Օլբիի գրականության մեջ արտացոլվում են երեք հիմնական կատեգորիաներ՝ դիցաբանական, պատմամշակութային և հոգեբանական:

Վերը նշված նպատակը բացահայտելու համար ատենախոսության մեջ դրվում են հետևյալ **խնդիրները**.

- քննել և վեր հանել է. Օլբիի առաջին շրջանի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունները՝ հիմնվելով տվյալ շրջանի թատերգությունների գեղագիտական սկզբունքների վերլուծության վրա,
- հետևել ստեղծագործական մեթոդի փոխակերպմանը Է. Օլբիի երկրորդ շրջանի պիեսներում՝ վեր հանելով դրանցում գերակայող հիմնական գեղագիտական սկզբունքներն ու ազդեցությունները,
- վեր հանել դրամատուրգի ստեղծագործական ընթացքի երրորդ շրջանում գեղագիտական նոր մեթոդի ձևավորման, ավելի ճիշտ՝ նրա դրամատուրգիայի մեջ մեթոդների համադրությունը, փոխակերպում-տրանսֆորմացիան պայմանավորող գեղագիտական սկզբունքներն ու, դրանով պայմանավորված՝ ստեղծագործական անհատականության և ոճի առանձնահատկությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, որը պարունակում է 105 աղբյուր: Ատենախոսության տեքստը շարադրված է 145 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ներածության մեջ կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության թեմայի հիմնական գաղափարները, առարկան, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ընդհանրացվել և ընդգծվել հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, նշվել են հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՌԵԱԼԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՆԹԵԶԸ Է.ՕԼԲԻԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ», նվիրված է հեղինակի վաղ ստեղծագործություններին՝ «Ի՞նչ էր պատահել զագանանոցում», «Ամերիկյան երազանք», «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» և «Նուրբ հավասարակշռություն» պիեսներին: Այստեղ քննարկվում են օտարման և ինքնաօտարման հասկացությունները, «ամերիկյան երազանքի» իմաստագրկումը, ինքնության որոնումը հայտնի թատերագրի վաղ շրջանի պիեսներում: Այս գլուխում Թամարա Անտոնյանը բացառիկ մանրամասներով և զիտատեսական հիմնավորումներով անդրադառնում արտուրդի թատրոնի տեսական խնդիրներին, ներկայացնում արտուրդի թատրոնի գրական ու գեղագիտական ավանդույթը, որ հնարավորություն է տալիս ատենախոսին հաջորդ գլուխներում այս համաբնագրում անդրադառնալու Էդվարդ Օլբիի դրամատուրգիայի քննությանը :

Երկրորդ գլուխը վերնագրված է «ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ Է.ՕԼԲԻԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ», ուր հեղինակը քննարկում է Օլբիի ստեղծագործության երկրորդ շրջանի հետևյալ երեք պիեսները՝ 1981թ. ադապտացված «Լոլիտա», 1986-1987 թվականների «Ամուսնական խաղ» և 1990-1991 թվականների «Երեք բարձրահասակ կանայք»: Հեղինակի երեք երկերի վերլուծությամբ ատենախոսը բացահայտում է պոստմոդեռնիստական միտումների ուժեղացման նախադրյալները, գործիքակազմն ու գեղարվեստական իրացման առանձնահատկությունները այս ստեղծագործություններում: Այս գլխում ատենախոսն անդրադառնում և քննության է դնում ֆեմինիստական որոշ խնդիրներ, որոնք արձարծվում են Օլբիի վերոնշյալ գործերում: Գլուխն ամբողջական է, հարցադրումները՝ զիտական և նպատակաբանված, պիտի նկատենք, սակայն, որ ուսումնասիրության այս հատվածը որոշ չափով նկարագրողական բնույթ է կրում, և հետագոտողը չի կարողացել տեսական-համակարգված ընդհանրացումների հանգել:

Երրորդ գլուխում՝ «Է.ՕԼԲԻԻ ԵՐՐՈՐԴ՝ ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», վերլուծության են ենթարկվում «Փոքրիկի մասին պիեսը», «Այծը, կամ ո՞վ է Սիլվիան» և «Թը՛խկ, թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ» ստեղծագործությունները: Ատենախոսության հեղինակը, ամենայն մանրամասնությամբ վերլուծելով այս դրամաները, հետաքրքիր եզրահանգման է

զալիս, նկատելով, որ «Թեև այս շրջանի պիեսներում հեղինակն օգտագործում է պոստմոդեռնիստական գեղագիտության բոլոր հիմնական տարրերն ու հնարները, ավելանում և առավել ակնհայտ են դառնում *դեկոնստրուկցիան, խաղն ընթերցողի հետ և էպատաժը:*»

Ներկայացված ատենախոսությունը գերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայինք նշել հետևյալները՝

1. Ատենախոսության վերնագրի մեջ «տրանսֆորմացիաներ» բառի փոխարեն կարելի էր և անհրաժեշտ է օգտագործել «փոխակերպում» բառը:
2. Ատենախոսության գլուխների մեջ տրամաբանորեն տրոհված, առանձնացված հատվածները բաժանված են աստղանիշերով: Կարծում ենք, ավելին, համոզված ենք, որ գիտական տեքստը չի ընդունում տրոհման նման տարբերակը. առավել ճիշտ կլիներ առաջարկել ենթազույգումներ, հանգամանք, որ ոչ միայն կընդգծեր տվյալ հատվածի գիտական խնդրադրությունը, այլև կամրացներ ընդհանուր հետազոտության գիտականությունը:
3. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը ավելի ուշադիր լիներ հղումների ձևակերպմանը, ատենախոսության մեջ հղումները միանման չեն:
4. Ատենախոսության թեմայով հրապարակված հոդվածները շատ են (թվով 10), և գերազանցում են ԲՈԿ-ի կանոնակարգով սահմանված պահանջը, սակայն զարմանալի է, որ հոդվածներից վերջինը տպագրվել է 2018 թվականին: Օլբիի և գիտական թեմայի հետ կապված մեր որոնումը ցույց տվեց, որ վերջին տարիների արտասահմանյան գրականագիտությունը բազմաթիվ անդրադարձներ է կատարել ամերիկյան այս խոշորագույն հեղինակին՝ ամենատարբեր ուումնասիրությունների, հոդվածների և անդրադարձների տեսքով: Ինչի՞ն վերագրել Թամարա Անտոնյանի այս հապաղումը, արդյ՞՞ք 2018

թվականից հետո ատենախոսը իր թեմայով հողված չի ցանկացել հրապարակել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները:

Թամարա Արթուրի Անտոնյանի «ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ» հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսության մեջ օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ արտասահմանյան գրականության ժամանակակից ուսումնասիրություններում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ բուհերի ուսումնական ծրագրերում, տեսական ուսումնասիրություններում:


Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական գրականագիտական, այնպես էլ լեզվական նշանակություն ունեցող նյութերով:


Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:


Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած 10 գիտական աշխատանքում:

Թամարա Արթուրի Անտոնյանի «ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող

պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
Արտասահմանյան գրականության,
գրական կապերի և գրականության տեսության
բաժնի վարիչ,  Ք.Հ. Բեջանյան

Ք.Հ. Բեջանյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության
ինստիտուտի տնօրենի ժ/պ. բանասիրական
գիտությունների թեկնածու  Հ.Որսկանյան



28 հունիսի 2023թ.